

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

### ՈՐՈՇՈՒՄ

13 Մարտ 2014, 305 - Ն

#### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ 2014-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ- ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N ՆԿ-183-Ն կարգադրության 2-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ղ ո շ ու մ է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տրանսպորտային անվտանգության ապահովման ազգային ռազմավարության դրույթների իրականացումն ապահովող 2014-2017 թվականների միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել համապատասխան պետական և տարածքային կառավարման մարմինների ղեկավարներին և առաջարկել Երևանի քաղաքապետին յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա մինչև 10-ը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

**Ծ Ր Ա Գ Ի Ր - Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՈՂ 2014-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

NN ը/կ	Նպատակը	Միջոցառումները	Ժամկետը	Կատարողը
1	2	3	4	5
1.	Տրանսպորտային երթևեկության անվտանգության ապահովում	<p>գործող ճանապարհային ցանցի ֆիզիկական վիճակի և ենթակառուցվածքների կատարելագործում</p> <p>ճանապարհային տնտեսության գործունեության նորմատիվ իրավական կարգավորման բավարար հիմքերի ներդրում, դրանք սահմանված միջազգային չափանիշներին լիարժեք համապատասխանեցման ապահովում</p> <p>ճանապարհների տրանսպորտային օբյեկտների հիմնա-նորոգման, սպասարկման ուղղությամբ իրականացվող աշխատանքների որակի բարձրացում և դրանց նկատմամբ ամենօրյա վերահսկողության իրականացում</p>	<p>2014-2017 թթ.</p> <p>2014-2017 թթ.</p> <p>2014-2017 թթ.</p>	<p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն</p> <p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն</p> <p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն</p>
2.	Ելնելով ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ծրագրից՝ գոյություն ունեցող ճանապարհների և կամուրջների ամրացում (լայնացում) և (կամ) նոր ճանապարհահատվածների կառուցում՝ նկատի ունենալով ծանր ու մեծ եզրաչափեր ունեցող սարքավորումների տեղափոխումը	Փոթի/Բաթում - Մեծամոր ճանապարհների, կամուրջների և թունելների ուսումնասիրություն	2015 թ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
3.	Ճգնաժամային իրավիճակների	ստղանքային գոտիներում, քարաթափումների և այլ բնական	2014-2015 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի

1	2	3	4	5
	կառավարում	սպառնալիքների տարածքներում գտնվող ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների ուսումնասիրություն և համապատասխան միջոցառումների իրականացում		Նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ (ըստ անհրաժեշտության)
4.	Արտակարգ իրավիճակներում գործելու ծրագրերի և պլանների մշակում	ճանապարհաշինարարական, վերանորոգման և սպասարկման աշխատանքներ իրականացնող կազմակերպություններում արտակարգ իրավիճակներում գործելու ծրագրերի և պլանների առկայություն	2014-2015 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
5.	Հայկական երկաթուղու համակարգի երկաթուղային գծանցներում տրանսպորտի ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում	կոնցեսիոն պայմանագրով նախատեսված՝ - անվտանգությունն ապահովող ժամանակակից տեխնոլոգիայով հագեցած սարքավորումներով, այդ թվում՝ արգելափակող լուսացույցներով, գծանցների արդիականում - գծանցների անցումային մասերի (փովածքի) վերանորոգում և արդիականացում - տրանսպորտի երթևեկության անվտանգությունն ապահովող ճանապարհային երթևեկության համապատասխան նշանների տեղադրում և ճանապարհի մակերեսի համապատասխան գծանշում	2014-2015 թթ., այնուհետև՝ սահմանված կարգով	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ ՀՀ համայնքներ (համաձայնությամբ) «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ (համաձայնությամբ)
6.	«Երկաթուղու պաշտպանական գոտու չափերի սահմանում և հստակեցում, երկաթուղու պաշտպանական գոտում քաղաքաշինական գործունեության կանոնակարգում	«Երկաթուղու պաշտպանական գոտու չափերը, երկաթուղու պաշտպանական գոտում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և այն ՀՀ կառավարություն ներկայացնելը	2014 թ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
7.	Երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքների, օբյեկտների, արհեստական կառույցների անվտանգության ապահովում	երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքների, օբյեկտների, այդ թվում՝ պաշտպանական գոտիների, հողային պաստառների, գծանցումների, երկաթուղային կամուրջների, թունելների անվտանգության ապահովում, դրանցում տեսավերահսկման միջոցների տեղադրում և դրանց միացում	2014-2017 թթ.	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

1	2	3	4	5
		ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ճգնաժամային կառավարման կենտրոններին		(համաձայնությամբ) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
8.	Երկաթուղային տրանսպորտի երթևեկության անվտանգության ապահովում	Երկաթուղային գծանցների վերանորոգում, գծանցների և ճանապարհների հատման հատվածներում տեխնիկական միջոցներով հագեցվածության ապահովում	2014-2017 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ (համաձայնությամբ)
9.	Հայաստանի հարավային երկաթուղու շինարարություն	տեխնիկատնտեսական հիմնավորման հաստատում	2014 թ. 2-րդ եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «ՌԱՄԻԱ» ՖԶԷ (համաձայնությամբ), ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
10.		նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	2014 թ. 3-րդ եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «ՌԱՄԻԱ» ՖԶԷ (համաձայնությամբ)
11.		նախագծանախահաշվային փաստաթղթերի հաստատում	2014 թ. 3-րդ եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «ՌԱՄԻԱ» ՖԶԷ (համաձայնությամբ), «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
12.		նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն	2014 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «ՌԱՄԻԱ» ՖԶԷ (համաձայնությամբ), «Երկաթուղու շինարարության

1	2	3	4	5
				տնօրինություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
13.		նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության արդյունքների հաստատում	2014 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «ՌԱՄԻԱ» ՖԶԷ (համաձայնությամբ), «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
14.		Ֆինանսական միջոցների հայթայթում և հաստատում	2014 թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «ՌԱՄԻԱ» ՖԶԷ (համաձայնությամբ)
15.		շինարարական կապալառու կազմակերպության ընտրություն	2015 թ. 1-ին եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «ՌԱՄԻԱ» ՖԶԷ (համաձայնությամբ)
16.		տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպության ընտրություն	2015 թ. 1-ին եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «ՌԱՄԻԱ» ՖԶԷ (համաձայնությամբ), «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՓԲԸ (համաձայնությամբ)
17.		շինարարության սկիզբ	2015 թ. 2-րդ եռամսյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «ՌԱՄԻԱ» ՖԶԷ (համաձայնությամբ)
18.	Տրանսպորտային անվտանգության օբյեկտների ֆիզիկական և բարոյական	Պուշկինի թունելի հիմնանորոգում	2014-2016 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

1	2	3	4	5
19.	մաշվածության վերացում	Նալբանդի թունելի հիմնանորոգում	2016-2017 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
20.		Դիլիջանի թունելի հիմնանորոգում	2014-2017 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
21.	Տրանսպորտային անվտանգության տեղեկատվական ապահովում	Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցի միասնական տեղեկատվական շտեմարանի ստեղծում	2015-2016 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), ՀՀ մարզպետարաններ
22.	Շրջակա միջավայրի վրա տրանսպորտի վնասակար ազդեցության նվազեցում	շրջակա միջավայրի վրա տրանսպորտի վնասակար ազդեցության նվազեցման միջոցառումների իրականացում	2016-2017 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ քննսպահականության նախարարություն
23.	Տրանսպորտի բնագավառը կարգավորող օրենսդրության կատարելագործում և արդիականացում	«Տրանսպորտային անվտանգության մասին» ՀՀ օրենքի մշակում	2015 թ. 1-ին կիսամյակ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն
24.	Տրանսպորտային օբյեկտներում ահաբեկչության դեմ պայքարի գործողությունների մշակում	տրանսպորտային օբյեկտների անձնագրավորման իրականացում: Հակաահաբեկչական օպերատիվ-մարտական ստորաբաժանումներին տրանսպորտային օբյեկտների ֆիզիկական և տեխնիկական նկարագրերի, սխեմաների, տեղաբաշխման և գործունեության առանձնահատկությունների տրամադրում, որի հիման վրա յուրաքանչյուր օբյեկտի համար կմշակվեն հնարավոր հակահաբեկչական միջոցառումների անցկացման մարտավարությունը և ուժերի, միջոցների հաշվարկը	մշտապես	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն,

1	2	3	4	5
				<p>ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, տրանսպորտային օբյեկտների տնտեսավարող սուբյեկտներ (համաձայնությամբ)</p>
25.		<p>տրանսպորտային օբյեկտների դասակարգում և խոցելիության աստիճանի գնահատում</p>	2016-2017 թթ.	<p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p>
26.	<p>Ճանապարհային երթևեկության մասնակիցների անվտանգության</p>	<p>հաճախակի տեղի ունեցող ճանապարհատրանսպորտային պատահարների (ՃՏՊ) վայրերի հայտնաբերում,</p>	յուրաքանչյուր եռամսյակ	<p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն,</p>

1	2	3	4	5
	ապահովում	պատճառների ուսումնասիրություն ու գնահատում, առաջացման պատճառների վերացման միջոցառումների պլանավորում և իրականացում		ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, «Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն» ՊՈԱԿ (համաձայնությամբ), ՀՀ ֆինանսների նախարարություն
27.	Տրանսպորտային անվտանգության ապահովում	սահմանային խոցելի և հակառակորդի կողմից վտանգ սպառնացող ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների հաշվառում և անվտանգության ապահովման միջոցառումների իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն առաջարկություններ ներկայացնելը	2014-2017 թթ.	ՀՀ պաշտպանության նախարարություն
28.		սահմանային խոցելի և հակառակորդի կողմից վտանգ սպառնացող ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների անվտանգության ապահովման միջոցառումների իրականացում	2014-2017 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ
29.		տրանսպորտային օբյեկտների և միջոցների տեխնիկական ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման ծրագրերի մշակում	2014-2017 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ),

1	2	3	4	5
				<p>ՀՀ մարզպետարաններ, ՀՀ կառավարությանն ատրնթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>
30.	<p>Տրանսպորտային անվտանգության նյութատեխնիկական պաշարների ստեղծում</p>	<p>տրանսպորտային վառելիքի (նավթամթերքների) ռազմավարական պաշարների ստեղծման միջոցա- ռումների իրականացում</p>	2015 թ.	<p>ՀՀ արտակարգ իրավի- ճակների նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն</p>
31.	<p>Տրանսպորտային փոխադրումների անվտանգության ապահովում</p>	<p>երկաթուղային տրանսպորտով ռազմական բեռնավո- խադրումների ապահովման միջոցառումների մշակում</p>	2015-2016 թթ.	<p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ պաշտպանության նախարարություն</p>
32.	<p>Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված ատդիտի իրականացում</p>	<p>ճանապարհային երթևեկության անվտանգության ապահով- մանն ուղղված ատդիտի իրականացում ճանապարհների վերականգնման, վերակառուցման կամ կառուցման ժամանակահատվածում</p>	<p>յուրաքանչյուր տարի, ճանապարհների վերականգնման, վերակառուցման կամ կառուցման ժամանակահատ- վածում հետևյալ փուլերով` I փուլ` նախագծման ժամանակ, II փուլ` շինարարա- կան աշխատանք- ների իրականացման ժամանակ, III փուլ` շինարա- րական աշխատանք- ների ավարտից</p>	<p>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ կառավարությանն ատրնթեր ՀՀ ուստիկանություն, ՀՀ արտակարգ իրավի- ճակների նախարարություն</p>

1	2	3	4	5
			հետո	
33.	Ճանապարհային երթևեկության մասնակիցների ուսուցում	ՀՀ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական հաստատություններում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ուսուցման ծրագրերի մշակում	2014 թ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
34.	Տրանսպորտային անվտանգության կադրային ապահովում	մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի վերանայման շրջանակներում տրանսպորտային անվտանգության մասնագիտությունների ցանկի և մասնագետների որակավորմանը ներկայացվող պահանջների հստակեցում համադրելով միջազգային չափանիշների հետ	2014-2015 թթ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
35.	Տրանսպորտային անվտանգության կադրերի պատրաստման տեղեկատվական համակարգի ստեղծում	պատրաստված տրանսպորտային անվտանգության կադրերի տվյալների բազայի մշակում մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի շահագործման շրջանակներում	2016-2017 թթ.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
36.	Բնակչության պաշտպանության, արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների վերացման, դժվարամատչելի վայրերում փրկարարական աշխատանքների արդյունավետության և օպերատիվության բարձրացման նպատակով ներկայումս չգործող օդանավակայանների վերագործարկում	-«Մտեփանավան» օդանավակայանի վարչական շենքի վերանորոգում և տարածքի բարեկարգում, ցանկապատում, օդանավակայանի գործունեության համար անհրաժեշտ կառույցների շինարարություն -օդանավակայանի թռիչքուղու վերականգնում	2014 թ.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
37.	Օդանավակայանների վերագործարկում	Կապանի օդանավակայանի վարչական շենքի վերանորոգում և տարածքի բարեկարգում, ցանկապատում, օդանավակայանի գործունեության համար անհրաժեշտ կառույցների շինարարություն -օդանավակայանի թռիչքուղու վերականգնում	2014-2015 թթ.	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն
38.	Մասնագիտական մակարդակի բարձրացմամբ անվտանգ գործունեության ապահովում	աշխատաշուկայի պահանջարկից ելնելով՝ քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի որակյալ մասնագիտական կադրերի պատրաստում	շարունակական	ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Երևանի քաղաքապետարան

1	2	3	4	5
				(համաձայնությամբ)
39.	Մետրոպոլիտենի ստորգետնյա ջրերի հեռացման համակարգի արդյունավետության բարձրացում	մետրոպոլիտենի «Երիտասարդական»-«Զորավար Անդրանիկ» կայարանների միջև ընկած հատվածում դրենաժային թունելի (1 կմ երկարությամբ) կառուցման աշխատանքների իրականացում	2014-2017 թթ.	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)
40.	Երևանում էլեկտրական տրանսպորտի համակարգի նորացում և ընդլայնում կիրառելով էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ	Երևանում էլեկտրական տրանսպորտի համակարգի նորացման և ընդլայնման միջոցառումների իրականացում	շարունակական	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ) ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
41.	Տրանսպորտային անվտանգության ապահովում	ճանապարհների բարեկարգում, նոր լուսացույցների տեղադրում, նշանների թարմացում, նոր ստորգետնյա և վերգետնյա անցումների կառուցում	շարունակական	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն, ՀՀ մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), ՀՀ համայնքներ (համաձայնությամբ)
42.	Երթևեկության պայմանների բարելավում	միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում և պահպանում	2014-2017 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
43.		մարզային և տեղական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում և պահպանում	2014-2017 թթ.	ՀՀ մարզպետարաններ,
44.	Գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործում, գյուղատնտեսական և անասնապահական մթերքների ինքնարժեքի իջեցում, գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման արդյունավետության	Մ-2 «Երևան-Երասխ-Գորիս-Իրանի Իսլամական Հանրապետության սահման» ավտոճանապարհի Երևան-Արտաշատ ճանապարհահատվածի Մարմարաշենի, Բուրաստանի, Դալարի համայնքների վարչական տարածքներում կառուցել ուղեանցեր. գ. Մարմարաշեն կմ15+400, գ. Բուրաստան կմ24+500, գ. Դալար կմ27+300	2014-2015 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, «Հյուսիս-հարավ ԾԻԳ» ՊՈԱԿ (համաձայնությամբ)

1	2	3	4	5
45.	բարձրացում և նյութական ծախսերի կրճատում, բնակչության աղքատության մակարդակի կրճատում	Մ-2 «Երևան-Երասխ-Գորիս-Իրանի Իսլամական Հանրապետության սահման» ավտոճանապարհի Արտաշատ - Արարատ ճանապարհահատվածի Արտաշատի, Տափերականի, Փոքր Վեդիի, Նոր կյանքի համայնքների վարչական տարածքներում կառուցել ուղեանցեր քաղ. Արտաշատ կմ30+400, գ. Տափերական կմ36+400, գ. Փոքր Վեդի կմ37+600, գ. Նոր կյանք կմ40+400	2015-2017 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն,  «Հյուսիս-հարավ ԾԻԳ» ՊՈԱԿ (համաձայնությամբ)
46.	Համայնքների միջև ավտոտրանսպորտային կապի բարելավում, ավտոտրանսպորտային ծախսերի կրճատում, ժամանակի խնայում, գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցում	Մարգային (տեղական) նշանակության ավտոճանապարհների վերանորոգում (84.5 կմ)	2014-2017 թթ.	ՀՀ Արարատի մարզպետարան
47.	Ավտոճանապարհների վրա կատարվող աշխատանքների կազմակերպման բարելավում և պարզեցում, նորոգման, պահպանման և շահագործման աշխատանքների ծրագրման, կատարման, վերահսկման մեխանիզմների բարելավում	մարգային (տեղական) նշանակության ավտոճանապարհների անձնագրավորում	2014-2015 թթ.	ՀՀ Արարատի մարզպետարան
48.	Հանրապետության ճանապարհային ցանցի բարելավում	Հ-292 և Հ-15 ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում	2014-2015 թթ.	ՀՀ Արմավիրի մարզպետարան
49.		Հ-281 ավտոմոբիլային ճանապարհի հիմնանորոգում	2014-2016 թթ.	ՀՀ Արմավիրի մարզպետարան
50.		Հ-282 և Տ-3-7 ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում	2014-2017 թթ.	ՀՀ Արմավիրի մարզպետարան
51.		Տ-3-17 ավտոմոբիլային ճանապարհի հիմնանորոգում	2014-2017 թթ.	ՀՀ Արմավիրի մարզպետարան
52.		Հ-293 ավտոմոբիլային ճանապարհի հիմնանորոգում	2014-2017 թթ.	ՀՀ Արմավիրի մարզպետարան
53.		Պետական նշանակության (միջպետական, հանրապետական և	պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և արհեստական կառուցվածքների պահպանում և	2014-2017 թթ.

1	2	3	4	5
	մարզային նշանակության) ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության անվտանգության և անցանելիության ապահովում	հիմնանորոգում		ՀՀ մարզպետարաններ (ըստ անհրաժեշտության)
54.	Տրանսպորտային անվտանգության ապահովում	պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների նշագծման և նշանների տեղադրման համալիր միջոցառումների իրականացում (ճանապարհների կահավորման համալիր աշխատանքներ)	2014-2017 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ
55.		տրանսպորտային օբյեկտների (կամուջներ, թունելներ, խողովակներ, հենապատեր և այլն) վիճակի ուսումնասիրություն, գնահատում ու դրանց վերանորոգման և ուժեղացման աշխատանքների իրականացում	2014-2017 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ մարզպետարաններ
56.	Տրանսպորտային անվտանգության ապահովում	պետական նշանակության ավտոճանապարհների մերձակա հատվածների ափսոսաշուշույան միջոցառումների իրականացում	2014-2017 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, ՀՀ մարզպետարաններ
57.	Հանրապետության ճանապարհային ցանցի բարելավում, համայնքների	Ախուրյանի տարածաշրջանի ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում, արհեստական կառույցներ և կահավորանք	2014-2017 թթ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
58.	ֆիզիկական մեկուսացվածության և աղքատության մակարդակի նվազեցում,	Հ-262 Հովունի-Հացիկ-Կարմրաքար ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
59.	բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում,	Հ-263 Շիրակ-Կամո ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
60.	գյուղատնտեսական մթերքների իրացման հնարավորությունների ընդլայնում, բնակչության շարժունության	Հ-266 Լեռնուտ-Կրաշեն – Մ-7 ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
61.	աստիճանի բարձրացում, մարզում զբոսաշրջության զարգացում	Հ-266-Մեծ Սարիար ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
62.		Հ-267 Ղարիբանյան-Ազատան – Մ-1 ավտոճանապարհ	2017 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
63.		Հ-17 –Առափի ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան

1	2	3	4	5
64.		Հ-269 Մ-1 – Բենիամին ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
65.		Գյումրի – Հացիկ ավտոճանապարհ	2016 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
66.		Տ-7-19 Կամո-Կառնուտ ավտոճանապարհ	2017 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
67.		Տ-7-20 Հացիկ-Շիրակ ավտոճանապարհ	2017 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
68.		Տ-7-22 Կամո-Ջաջուռ ավտոճանապարհ	2017 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
69.		Տ-7-23 Ախուրյան-Արևիկ-Ազատան ավտոճանապարհ	2017 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
70.		Տ-7-24 Այգեբաց-Նոր կյանք ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
71.		Տ-7-27 Ախուրիկ –Ոսկեհասկ-Հայկավան ավտոճանապարհ	2017 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
72.		Արթիկի տարածաշրջանի ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում, արհեստական կառույցներ, կահավորանք	2014-2017 թթ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
73.		Հ-21 – Տուֆաշեն ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
74.		Հ-21 – Հովտաշեն ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
75.		Հ-276 Մ-1 – Հայրենյաց-Հայկասար ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
76.		Տ-7-38 Հ-21 - Հառիճ-Նահապետավան ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
77.		Տ-7-39 Հայրենյաց-Տուֆաշեն – Հ-21 ավտոճանապարհ	2015 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
78.		Անիի տարածաշրջանի ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում, արհեստական կառույցներ, կահավորանք	2014-2017 թթ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
79.		Հ-17- Ջրափի ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի

1	2	3	4	5
				մարզպետարան
80.		Հ-17 Հայկաձոր ավտոճանապարհ	2015 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
81.		Հ-17 –Անիպեմզա ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
82.		Հ-270 Մարալիկ-Քարաբերդ-Ձիթհանքով ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
83.		Հ-272 Քարաբերդ-Սարակապ-Հ-17 ավտոճանապարհ	2016 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
84.		S-7-30 Մարալիկ-Բարձրաշեն - Հ-17 ավտոճանապարհ	2017 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
85.		S-7-33 Լանջիկ-Քարաբերդ ավտոճանապարհ	2015 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
86.		Աշոցքի և Անասիայի տարածաշրջանի ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգում, արհեստական կառույցներ և կահավորանք	2014-2017 թթ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
87.		Հ-253 Շաղիկ-Արդենիս-Թավշուտ-Սիզավետ ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
88.		Հ-253 - Պաղակն-Բերդաշեն ավտոճանապարհ	2016 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
89.		Հ-254 Հ-31 - Փոքր Սարիար-Սարապատ ավտոճանապարհ	2016 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
90.		Հ-256 Երիզակ-Զարիշատ-Արավետ-Մեծ Սեպասար - Մ-1 ավտոճանապարհ	2017 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
91.		Հ-257 Հ-32 – Բյուրակն-Ողջի-Առափի - Մ-7 ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
92.		Հ-257 Մեղրաշատ-Բյուրակն ավտոճանապարհ	2016 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
93.		Հ-258 Մ-1 – Սարազյուղ ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
94.		Հ-259 Մ-1 – Կարմրավան ավտոճանապարհ	2015 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան

1	2	3	4	5
95.		Հ-260 Մ-1 - Զույգադրյուր-Հարթաշեն- Հ-31 ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
96.		Հ-261 Մ-1 – Ցողամարզ ավտոճանապարհ	2016 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
97.		S-7-2 Ամասիա-Պաղակն-Զորակերտ ավտոճանապարհ	2015 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
98.		S-7-3 Ողջի-Մեղրաշատ ավտոճանապարհ	2017 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
99.		S-7-5 Ալվար-Աղվորիկ ավտոճանապարհ	2017 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
100.		S-7-8 Հ-32 – Հովտուն-Աշոցք ավտոճանապարհ	2016 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
101.		S-7-13 Մ-1 – Ղազանչի ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
102.		S-7-14 Հարթաշեն-Մուսայելյան ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան
103.		S-7-17 Մ-1 – Արփենի ավտոճանապարհ	2014 թ.	ՀՀ Շիրակի մարզպետարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ